

**ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
2015Թ.**

Անձնակազմի կառավարման բաժնի աշխատակիցների թվաքանակը չի փոփոխվել և բաղկացած է 3 հաստիքից

Բաժնի պետ

Ա.Աղլոյան

Բաժնի գլխավոր մասնագետ

Կ.Ադամյան

Բաժնի առաջատար մասնագետ

Կ.Խառատյան

Բաժնի հիմնական գործառույթներն են՝

Քաղաքացիական ծառայողների և մարզպետարանի ենթակայության հիմնարկ-
ծեռնարկությունների տնօրենների անձնական գործերի վարումը, քաղ. ծառայողների
վերապատրաստումների կազմակերպումը, մրցույթների և ատեստացիաների
կազմակերպումը և անցկացումը, պաշտոնների նշանակումը և ազատումը, դրանց
սահմանված ժամկետների պահպանումը, թեստավորման հարցաշարերի և
պաշտոնների անձնագրերի կազմումը և այլ գործառույթներ:

Մարզպետարանի աշխատակազմի աշխատողների թվաքանակը՝ համաձայն
հաստիքացուցակի չի փոփոխվել և կազմում է 149 մարդ, որից քաղ. ծառայողներ
133, որից առանձնացված ստորաբաժանումներում 27:

Առ 01.01.16թ առկա է

Թափուր պաշտոններ՝

Ընդամենը՝ 1, նախորդ տարվա 5-ի փոխարեն

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի
գլխավոր մասնագետի

Ժամանակավոր թափուր պաշտոններ (ֆիզ. արձակուրդ)

Ընդամենը՝ 2 նախորդ տարի 2

Առողջապահության վարչության առողջապահության

բաժնի առաջին կարգի մասնագետի

Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին առաջատար մասնագետի

Պայմանագրային աշխատողներ՝ Ընդամենը՝ 9 նախորդ տարվա 9-ի նկատմամբ

Պայմանագրերի նախապատրաստում

Մրցույթով անցած 9 դպրոցի տնօրենների (նույն չափով որպես
Ժամանակավոր պաշտոնակատարների) և 9 տեխնիկական սպասարկում
իրականացնող անձնակազմի փոխարինողների և «Ձեռք բերած
մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող
գործազուրկների՝ գործատուի մոտ մասնագիտական աշխատանքային փորձ
ձեռք բերելու համար աջակցության տրամադրման կազմակերպում» ծրագրի
շրջանակներում 2 պրակտիկանտների հետ կնքվել են պայմանագրեր
(իրավաբանական և տեղեկատվության և հաս. հետ կապերի բաժիններ):

Անցկացված մրցույթներ՝ 2015 թվականին ՀՀ Լոռու մարզպետարանի
աշխատակազմում առաջատար պաշտոններ զբաղեցնելու համար

հայտարարվել է 12 մրցույթ, անց է կացվել 11-ը (1 մրցույթի համար դիմորդ չի եղել), ընդհանուր դիմորդների քանակը՝ 37, մասնակիցների քանակը 28 և 6 կրտսեր պաշտոնների մրցույթներ (դիմորդների քանակը՝ 6), իսկ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից Լոռու մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոն զբաղեցնելու համար՝ 1 մրցույթ:

Քաղաքացիական ծառայության պաշտոնում նշանակվել են 12-ը որից՝

գլխավոր պաշտոն - 1

առաջատար պաշտոն - 5

կրտսեր պաշտոն -- 6

Իրականացվել է մրցույթների հարցազրույցի փուլի հարցաշարերի կազմման աշխատանքները, (հարցաշարերը կազմվում են տվյալ թափուր պաշտոնի անձնագրով նախատեսված օրենքներից, իրավական ակտերից) մրցույթների հայտարարությունների հրապարակումները և մրցույթի ավարտից հետո մրցույթի արդյունքների մասին ամփոփ տեղեկատվության տեղադրումը մարզպետարանի էլեկտրոնային կայքում:

Անցկացված ատեստացիա բարձրագույն պաշտոն - 2

գլխավոր պաշտոն - 11

առաջատար պաշտոն - 13

կրտսեր պաշտոն - 5

Այդ թվում իրականացվել է հարցազրույցի փուլի հարցաշարերի վերամշակման աշխատանքներ, յուրաքանչյուր ատեստավորվողի համար կազմվել է առանձին փաթեթներ, որտեղ ներառվել են վերջին 2 կիսամյակային հաշվետվությունները, համապատասխան դասյին աստիճան շնորհելու իրավական ակտերը, նախորդ ատեստավորման արդյունքները

Վերապատրաստում 35 քաղաքացիական ծառայողներ անցել են վերապատրաստում, որոնց համար հայտ է ներկայացվել քաղ. ծառայության խորհուրդ, ընտրվել տվյալ քաղ. ծառայողների համար համապատասխան ծրագրեր

Պաշտոնի անձնագիր

Տարածքային սոցիալական ծառայությունների աշխատանքի բնույթի փոփոխության հետ կապված 27 պաշտոնի անձնագրերում նախապատրաստվել է համապատասխան փոփոխություններ և ներկայացվել համաձայնեցման

Դասային աստիճանի շնորհում -12 (որոնցից 4-ը իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված քաղ. ծառայության դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան): Աշխատակազմի 93 քաղ. ծառայողներ ունեն ավելի բարձր դասային աստիճան, 1 քաղ. ծառայողի դեռևս չի շնորհվել դասային աստիճան;

Արտամրցույթային նշանակումներ՝ 4.

Պապոյան Հրայր- Ֆին վարչ. պետ

Բեջանյան Արտո - Ֆին վարչ

Թամարյան Դավիթ- Ֆին վարչ

Համբարձումյան Նաիրա - Կանանց և երեխաներ.

Կարգապահական տույժեր - 2 (Ղուբաթյան, Եղիազարյան Հայկ)

Խրախուսանքներ - Քաղաքացիական ծառայության մասին օրենքով սահմանված կարգով խրախուսանք 2ի կիրառվել :

Պաշտոնավարման ժամկետի երկարացում – մինչև մեկ տարով երկարացվել է 3 քաղաքացիական ծառայողների պաշտոնավարման ժամկետները:

Աշխատանքի ընդունված – 12 քաղ. ծառայողներ

- 1 պայմանագրային

Աշխատանքից ազատված – 10 (9-ը քաղ ծառայող)

Հաստատվել է 2016թ-ի ատեստավորման ենթակա քաղ. ծառայողների ցուցակները և ներկայացվել քաղ.ծառայության խորհուրդ ընդհանուր՝ 39-ը, որից 16 գլխավոր,11 առաջատար, 12 կրտսեր:

Բոլոր աշխատակիցները ծանոթացվել են անձնական գործերում առկա 2015թ-ի ընթացքում համալրված փաստաթղթերին:

Քաղ.ծառայության ծրագրային ապահովում բացի Մուլբերի համակարգից,որով իրականացվում է ներքին փաստաթղթաշրջանառությունը,բաժինը աշխատում է նաև քաղ.ծառայության Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգ (ՄՌԿՏՀ) ծրագրով,որտեղ ներառված են աշխատողների անձնական տվյալների ամբողջ բազան բաղկացած 42 չափանիշներից և ցանկացած փաստաթղթային փոփոխություն համապատասխան ժամկետներում ներառվում է տվյալ բազայում: Այդ ծրագրի սպասարկման համար կնքվել է պայմանագիր <<ԵՐՄՄԳՀԻ>> ՓԲԸ-ի հետ:

Կիսամյակային կատարողական Ամփոփվել և Աշխատակազմի ղեկավարին է ներկայացվել աշխատակիցների կիսամյակային կատարողականների գնահատման արդյունքները(բոլոր աշխատակիցները ունեցել են 75%-ից բարձր ցուցանիշ)

Աշխատանքային գրքույկներ Նոր նշանակված և աշխատանքից ազատված մարզպետարանի աշխատակիցների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարների աշխատանքային գրքույկներում կատարվել են համապատասխան գրառումներ

Տեղեկանքներ - 39 աշխատողների տրամադրվել է տեղեկանքներ աշխատանքային ստաժի վերաբերյալ

Գրություններ Նախապատրաստվել է 71 գրություններ (պատասխաններ,ԲԾԽ-ին տեղեկատվություն)

Վկայականներ Նախապատրաստվել և աշխատակազմի աշխատակիցներին է տրամադրվել 5 ծառայողական վկայականներ

Քաղաքացիների ընդունելություն բաժնի կողմից կատարվել է քաղաքացիների ընդունելություն, հիմնականում խորհրդատվական, կապված թափուր պաշտոններ զբաղեցնելու մրցույթների կազմակերպման գործընթացների հետ:

Դիմումներ նախապատրաստվել և պատասխանվել է 2 քաղաքացիների դիմումների **Ուսումնասիրություն**

Բաժնի կողմից մշակվել է աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգ:

Անձնական գործեր Նախապատրաստվել և Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել աշխատակիցների անձնական գործերի պատճենները էլեկտրոնային բազա ստեղծելու համար, ինչպես նաև աշխատակազմի փոփոխված աշխատակիցների տվյալները:

Աշխատակազմի աշխատակիցների համար ձևակերպվել են 2015թվականի արձակուրդները:

2015թ-ի հաշվետու ժամանակաշրջանում բաժնի կողմից ընդհանուր առմամբ նախապատրաստվել է՝

Լոռու մարզպետի **որոշումների նախագծեր** - 67

Լոռու մարզպետի **կարգադրությունների նախագծեր** - 293

Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի **հրամանների նախագծերի** - 343

Գործուղման թերթիկներ -431

2015թ-ին քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից բաժնում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում բաժնի կողմից կատարված թերություններ կամ բացթողումներ չեն արձանագրվել:

Կատարվելիք աշխատանքներ:

2017թ. հունվարի 1-ից ուժը կորցրած է ճանաչվելու քաղաքացիական ծառայողների ատեստավորման անցկացման և վերապատրաստումների գործող համակարգը: Ներկայումս աշխատանքներ են տարվում նոր համակարգի ներդրման համար, որի հետևանքով անհրաժեշտ կլինի մշակել և տեղայնացնել նոր ձևաչափի հարցաշարեր, ինչպես նաև համակարգչային ծրագրերով նախատեսված վերապատրաստումների համար վերհանել կոնկրետ պահանջների կատարելագործման համար անհրաժեշտ ծրագրերը:

(Քաղաքացիական ծառայողը կատարողականի գնահատման և վերապատրաստումների արդյունքում սահմանված միավորների (կրեդիտների) նվազագույն շեմը չհաղթահարելու դեպքում ենթակա է ամփոփիչ գնահատման, որը անցկացվում է երեք տարին մեկ անգամ:

Վերապատրաստումն անցկացվում է նաև քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով քաղաքացիական ծառայողի իրավունքների ու պարտականությունների, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման կոնկրետ պահանջների կատարելագործման կամ այդ պահանջների փոփոխության դեպքում՝ քաղաքացիական ծառայողի կամ աշխատակազմի ղեկավարի նախաձեռնությամբ):

2016թ-ի ընթացքում նախատեսվում է իրականացնել քաղաքացիական ծառայության պաշտոնների գնահատման նոր համակարգի ներդրման գործընթացը՝ այն է վերանայել աշխատակազմի քաղաքացիական

ծառայողների պաշտոնների խմբերի համապատասխանությունը գործող պաշտոնի անձնագրերով իրականացվող գործառույթներին:

ՀՀ Սահմանադրության փոփոխությամբ պայմանավորված իրականացվելու է թեստավորման հարցաշարերի սահմանադրության բնագավառի հարցաշարերի փոփոխություն բոլոր պաշտոնների խմբերում(բարձրագույն,գլխավոր առաջատար և կրտսեր):

2014թ-ին ներկայացված հիմնախնդիրները իրականացվել են 2015թ-ի աշխատանքային տարում (արձակուրդների ձևակերպումներ, աշխատակիցների անձնական գործերի էլեկտրոնային հաշվառում,կատարվել է ՏԿԱԱԻՆ-ում):